# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2024 թվականի N 930

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՆԱԿԻ ՓՈՂՈՑ 2-2/1 ՏԱՂԱՎԱՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Պապ և Դավիթ>> ՍՊԸ-ի տնօրեն Վահագն Ռաֆիկի Սաքանյանի կողմից լիազորված անձ Սմբատ Սեյրանի Հակոբյանի 05.03.2024 թվականի թիվ 4633 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04122020-06-0020 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման թիվ 158004 քաղվածքը, 04.03.2024 թվականին <<Պապ և Դավիթ>> ՍՊԸ-ի տնօրեն Վահագն Ռաֆիկի Սաքանյանի կողմից տրված լիազորագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Բանակի փողոց թիվ 2-2/1 տաղավարին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Բանակի փողոց, 2/2 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 15
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

15 ապրիլի 2024 թվականի N 931

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-084-0098-0005) 6-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համյանքի Շահումյան գյուղի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14082020-06-0031 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /155567/ քաղվածքը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Տարանջատել Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր՝ 06-084-0098-0005) 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 16 հասցեում գտնվող Վանաձոր համայնքի Շահումյան գյուղին սեփականության իրավունքով պատկանող հողամասը՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և 2 հատակագծերի:

2. Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր՝ 06-084-0098-0005) 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 16 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի Շահումյան գյուղին սեփականության իրավունքով պատկանող, տարանջատված անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցեներ.

ա)0.12000հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, 16 հողամաս (հատակագիծ թիվ 1):

բ)0.01778հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, 16/1 հողամաս (հատակագիծ թիվ 2):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2024 թվականի N 932

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Սարգսի Սողոմոնյանի, Վահագն Վահանի Մամյանի, Հայկ Վահանի Մամյանի 09.02.2024թ, թիվ 2919 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1718616 վկայականը, անշարժ գույքի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը /157633/, 09.11.2023 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 6338 վկայագիրը (նոտարական ակտի կոդ:741-20231009-84-7365471), 09.11.2023 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի 6340 վկայագիրը (նոտարական ակտի կոդ:741-20231009-84-7365474), 09.11.2023 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի 6342 վկայագիրը (նոտարական ակտի կոդ:741-20231009-84-7365473), 09.11.2023 թվականի սեփականության իրավունքի թիվ 6337 վկայագիրը (նոտարական ակտի կոդ:741-20231009-84-7365479) ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233 -Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Խորենացի փողոց թիվ 1գ հասցեում գտնվող տարածքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Մ. Խորենացու փողոց, 1 շենք, 147 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2024 թվականի N 933

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0012-0002) ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Լևոնի Վիրաբյանի և Արմինե Գարսևանի Ղևոնդյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 600344 վկայականը, 25.10.1993թ. տրված թիվ III-СЛ 460020 ամուսնության վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի, գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0012-0002) գտնվող տնամերձին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 12-րդ փողոց, 6-րդ փակուղի, 2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 15
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2024 թվականի N 934

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ-7 ԹԻՎ 34/4Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անժելինա Ռուբենի Դավթյանի և Վիտյա Վոլոդյայի Նորեկյանի 16.02.2024թ. թիվ 3373 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1745361 վկայականը, անշարժ գույքի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը /157640/, 18.12.2023 թվականի սեփականության իրավունքի թիվ 5117 վկայագիրը (նոտարական ակտի կոդ:598-20231218-105-7560491), 18.12.2023 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի 5118 վկայագիրը (նոտարական ակտի կոդ:598-20231218-84-7560395), 18.12.2023 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի 5119 վկայագիրը (նոտարական ակտի կոդ:598-20231218-84-7560402), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233 -Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-7 թիվ 34/4գ հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Տարոն-2 ՔՇՀ-7 թաղամաս, 34/4 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2024 թվականի N 935

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 3Ա ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Աղասու Ջալալյանի 04.04.2024 թվականի թիվ 6480 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1987537 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման թիվ քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Մաշտոցի փողոց 1-ին նրբանցք թիվ 3ա բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Մ. Մաշտոցի փողոց, 1-ին նրբանցք, 3/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2024 թվականի N 936

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 06-031-0061-0211 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդան Գառնիկի Պողոսյանի 22.03.2024 թվականի թիվ 02/5721 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1849429 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք 06-031-0061-0211 ծածկագրով, 0.0601 համակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 1-ին փողոց, 23 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2024 թվականի N 937

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 40 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՈՐԻԿ ԱԶԱՏԻ ԲԵՐՆԵՑՅԱՆԻ ԵՎ ԱՆԱՀԻՏ ՍՏՈՓՈՐԻ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նորիկ Ազատի Բերնեցյանի (ծնված՝ 11.08.1959թ.) և Անահիտ Ստոփորի Կոստանդյանի (ծնված՝ 23.11.1958թ.) դիմումը, 10.12.1976թ. տրված գույքային թերթը, 25.12.2023թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 10190 (նոտարական ակտի կոդ: 763-20231224-84-7578268) վկայագիրը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 29.12.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023E7EEK3), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 07.03.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-106/24 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց թիվ 40 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 470.0քմ հողամասին կից 140.44քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1970-1994թթ-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 610.44քմ :

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Նորիկ Ազատի Բերնեցյանի(1/2) և Անահիտ Ստոփորի Կոստանդյանի (1/2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց թիվ 40 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 470.0քմ մակերեսով հողամասին կից 140.44քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Նորիկ Ազատի Բերնեցյանի(1/2) և Անահիտ Ստոֆորի Կոստանդյանի (1/2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Սուդուկյան փողոց թիվ 40 հասցեի 610.44քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Վանաձոր քաղաքի Սուդուկյան փողոց թիվ 40 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Սունդուկյան փողոց թիվ 40/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2024 թվականի N 938

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 3-ՐԴ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ, 13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-031-0094-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Վաղարշակի Քարհանյանի և Անահիտ Վաղարշակի Մաշակարյանի 17.01.2024 թվականի թիվ 02/1115 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 20112023-06-0011 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք 3-րդ փողոց, 1-ին փակուղի, 13 հասցեում գտնվող, 06-031-0094-0002 ծածկագրով, հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Գուգարք գյուղ, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցքի 10-րդ անցուղի, 28 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2024 թվականի N 939

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐ-ԴՈՍԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5Ա ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թերեզա Հովհաննեսի Հովհաննիսյանի կողմից լիազորված անձ Սամվել Սերգեյի Ավետիսյանի 03.04.2024 թվականի թիվ 6377 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1873987 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման թիվ քաղվածքը, 01.04.2024թ. թիվ 77 ԱԴ 6516256 լիազորագրի ռուսերենից հայերեն թիվ 2290 թարգմանությունը (նոտարական ակտի կոդ: 763-20240403-64-7831493), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Նար-Դոսի փողոց թիվ 5ա բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նար-Դոսի փողոց, 5/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2024 թվականի N 940

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1692 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԼՅՈՒՔՍ» ԱԿ-ի նախագահ Զարինա Արթուրի Մոսոյանի 11.03.2024 թվականի թիվ 01/4895 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 04 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1692 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ***.

Վանաձոր համայնքի ղեկավարի 04 դեկտեմբերի 2023 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Սանկտ-Պետերբուրգի փողոց 2/9 հասցեում գտնվող «Լյուքս» արտադրական կոոպերատիվին սեփականության իրավունքով պատկանող շինությունը որպես երկու առանձին գույքային միավորներ տարանջատելու և փոստային հասցեներ տրամադրելու մասին» թիվ 1692 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Որոշման 2-րդ կետի ա) և բ) ենթակետերում «շինություն» բառը փոխարինել «հողամաս» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2024 թվականի N 941

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-031-0098-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Փափակի, Արևիկ Ալբերտի, Արման Ալբերտի, Թագուհի Ալբերտի Գրիգորյանների դիմումը, 20.05.2022թ. թիվ 2657 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 20220520-84-5921166), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-իթիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ի ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, գյուղ Գուգարքում գտնվող, 06-031-0098-0001 ծածկագրով, 0.0783 համակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Գուգարք գյուղ, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 75 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

16 ապրիլի 2024 թվականի N 942

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2024 թվականի ապրիլի 8-ի Վանաձոր համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 29–ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 3-Ն որոշումը ու ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

1. Սահմանել Վանաձոր համայնքի 2024 թվականի փոփոխված բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 16
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ապրիլի 2024 թվականի N 943

## ՄԱՐԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարինե Սամվելի Գալստյանի 04.04.2024թ. թիվ 02/6495 դիմումը, Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 30-ի «Մարինե Գալստյանին վարձակալությամբ տարածք հանձնելու մասին» թիվ 63 որոշումը, 2018 թվականի հունիսի 21-ի «Անշարժ գույքի վարձակալության» թիվ 2186 պայմանագիրը և Վանաձոր համայնքի ավագանու 2024 թվականի 08 ապրիլի թիվ 16 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Վանաձոր համայնքի ղեկավարը որոշում է.

1.Վանաձոր համայնքի ղեկավարի և Մարինե Գալստյանի միջև 2018 թվականի հունիսի 21-ի «Անշարժ գույքի վարձակալության» թիվ 2186 պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը, վարձավճարի չափ սահմանելով 1քմ-ի համար ամսական՝ 1200/մեկ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Մարինե Գալստյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անշարժ գույքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 16
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ապրիլի 2024 թվականի N 944

## ՆՈՏԱՐ ՌՈԶԱ ԲԵԿՉՅԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լոռու մարզ» նոտարական տարածքի նոտար Ռոզա Բեկչյանի 21.02.2024թ. 01/3831 դիմումը, Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 31-ի «Ռոզա Բեկչյանին վարձակալությամբ տարածք հանձնելու մասին» թիվ 74 որոշումը, 2019 թվականի հունիսի 20-ի «Անշարժ գույքի վարձակալության» պայմանագիրը և Վանաձոր համայնքի ավագանու 2024 թվականի 08 ապրիլի թիվ 15 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Վանաձոր համայնքի ղեկավարը որոշում է.

1.Վանաձոր համայնքի ղեկավարի և «Լոռու մարզ» նոտարական տարածքի նոտար Ռոզա Բեկչյանի միջև 2019 թվականի հունիսի 20-ին կնքված տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը, վարձավճարի չափ սահմանելով 1քմ-ի համար ամսական՝ 1200/մեկ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Ռոզա Բեկչյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՄԱՐԳԱՐԻՏ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 16
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2024 թվականի N 945

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ 92-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Օֆելյա Սպարտակի Ջուլհակյանի 01.04.2024 թվականի թիվ 02/6258 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22092023-06-0026 վկայականը, «Տարոն Վարդանյան Արտուրի» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը 29.03.2024 թվականի մասնագիտական եզրակացությունը,,անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 01.04.2024 թվականի հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2024X8V24L), ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2021թ. Փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք Աղայան փողոց 92-1 հասցեում գտնվող 0.0095 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ղ. Աղայան փողոց, 84/4 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 17
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2024 թվականի N 946

### ՍԱՄՎԵԼ ՎՈԼՈԴԻԱՅԻ ՕՀԱՆՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 40 ՇԵՆՔԻ ՇՔԱՄՈՒՏՔՈՒՄ 17 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՌԱՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 16.02.2024 թվականին կազմվել են արձանագրություն և զեկուցագիր, որոնց հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Սամվել Վոլոդիայի Օհանյանի (բնակության վայր՝ քաղաք Վանաձոր, Տիգրան Մեծ պողոտա, թիվ 40 շենք, 17 բնակարան) կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 16.02.2024 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտա, թիվ 40 շենքի, շքամուտքի 4-րդ հարկի և վերնահարկի միջև ընկած տարածքում, թիվ 17 և 19 բնակարանների աստիճանահարթակին կից ինքնակամ կառուցվել է մառան, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարք է: Մառանը ապօրինի տնօրինվում է Սամվել Վոլոդիայի Օհանիյանի կողմից:

2024 թվականի փետրվարի 16-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2024 թվականի մարտի 14-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու համար ծանուցվել են Տիգրան Մեծ պողոտա թիվ 40 շենքի 17 բնակարանի բնակիչ՝ Սամվել Օհանյանը և նույն շենքի թիվ 19 բն. բնակիչ՝ Լյովա Սարգսյանը: Վարչական վարույթի

լսումներին ներկայացել է Լյովա Սարգսյանը, իսկ Սամվել Օհանյանը չի ներկայացել և փոստային առաքման հետադարձ կտրոնը ստացվել է վարույթի լսումներից հետո՝ 04.03.2024 թվականին: Վարույթի լսման ժամանակ Լյովա Սարգսյանը հայտնել է, որ իրենց բնակարանին կից շքամուտքից դեպի վերնահարկ ինքնակամ կառուցված մառանը տնօրինում է թիվ 17 բնակարանի բնակիչ՝ Սամվել Օհանյանը ( ըստ վերջինիս հայտարարության մառանը 50 տարի առաջ կառուցել է նրա հայրը՝ Վոլոդյա Օհանյանը, ով մահացել է (հիմք ՔԿԱԳԲ գրություն, որի համաձայն Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտա 40 շենք, 17 բնակարանում հաշվառված, 07.07.1931թ.ծնված՝ Վոլոդյա Ալեքսոյի Օհանյանը մահացել է 24.07.2016 թվականին, մահվան վկայական թիվ ԱԲ 257011)):Այնուհետև կրկին վարչական վարույթի լսումներ են հրավիրվել 2024 թվականի մարտի 14-ին, որին մասնակցելու նպատակով կրկին ծանուցվել են Սամվել Օհանյանը և Լյովա Սարգսյանը:Վերջինս պատշաճ ծանուցվել սակայն վարույթին չի ներկայացել իսկ Սամվել Օհանյանի փոստային ծանուցման հետադարձ անդորրագրերը մինչ օրս չեն ստացվել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

09 ապրիլի 2024 թվականին Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 705 որոշմամբ վարչական վարույթը կասեցվել է:

Սամվել Օհանյանին 20 մարտի 2024 թվականին ուղարկված Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 705 որոշման փոստային ծանուցման հետադարձ կտրոնը առկա չի եղել:

02 ապրիլի 2024 թվականին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի համաձայն 9.04.2024 թվականին ընդունված «Սամվել Օհանյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնելու մասին» թիվ 705 որոշումը տեղադրվել է ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն մասով գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, համապատասխան ծանուցումը համարվում է ծանուցված (ստացված):

Ուստի, Սամվել Վոլոդիայի Օհանյանի վերաբերյալ 26.02.2024 թվականին հարուցված վարչական վարույթը համարվում է վերսկսված, քանի որ դրա կասեցման հիմք դարձած հանգամանքը վերացել է:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝պետությանը, համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կատարելը հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից՝առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են

օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Սակայն վարչական գործի քննությամբ չի պարզվել թե երբ և ում կողմից է կառուցվել նշված մառանը:

«Հայաստանի Հանրապետության քաղացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կառուցված և ինքնակամ կառույցների հաշվառման կարգ սահմանող Կառավարության որոշմամբ սահմանված կարգով հաշվառված ինքնակամ կառույցների վրա տարածվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ինքնակամ կառուցների օրինականացմանը վերաբերող կարգավորումները, այդ թվում՝ դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի դրույթները:

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները: Ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը: Վերը նշված հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ինքնակամ կառույցների առկայությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով: Ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Համաձայն հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի, քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքներն իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ և հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առքուվաճառքի,

նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 38-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների դրույթները, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները:

**ՈՐՈՇԵՑԻ**

1.Սամվել Վոլոդիայի Օհանյանի վերաբերյալ 19.03.2024 թվականին կասեցված վարչական վարույթը վերսկսել:

2. Հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի «Վանաձորի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի և իրավապահ մարմինների օժանդակությամբ քանդել՝ Վանաձոր համայնքի Տիգրան-Մեծ պողոտայի 40 շենքի շքամուտքում, թիվ 17 և հանդիպակած թիվ 19 բնակարաններին կից, 4-րդ հարկի և վերնահարկի միջև ընկած տարածքում ինքնակամ կառուցված մառանը:

3.Առաջարկել ՀՀ ոստիկանությանը Վանաձորի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

4.Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի վրա:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

6.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձորի համայնքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

7.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Վանաձորի համայնքապետարանի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 17
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

17 ապրիլի 2024 թվականի N 947

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԻՍՐԱՅԵԼ ՕՐՈՒ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԹՈՒՐ ՎԱՆՈՒՇԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Վանուշի Ոսկանյան 07.03.2024 թվականի թիվ 02/4757 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22122022-06-0062 վկայականը, «Գասպար Վեքիլյանի» ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը մասնագիտական եզրակացությունը,անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Իսրայել Օրու 1-ին փողոց 3/1 հասցեում գտնվող Արթուր Վանուշի Ոսկանյանի սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող բնակելի նշանակության շինությունները՝ համաձայն «Գասպար Վեքիլյան » ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի

2.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Իսրայել Օրու 1-ին փողոց 3/1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ

ա.0.07777 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 87.25 քմ բնակելի նշանակության շինությունների փոստային հասցեն՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Իսրայել Օրու փողոց, 3/1 բնակելի տուն:

բ.0.06009 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Իսրայել Օրու փողոց, 3/3 հողամաս:

3.334.84 քմ մակերեսով հողամասը հավասար բաժիններով ընդհանուր է կից տնատիրության Լոռու մարզ համայնք Վանաձոր, Իսրայել Օրու 1-ին փողոց 3/2 հասցեի բնակելի տան սեփականատիրոջ հետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 17
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

18 ապրիլի 2024 թվականի N 948

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂՈՑ 20/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՄԵՆ ՀԱՄԼԵՏԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Համլետի Մարտիրոսյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07122023-06-0058 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով՝ ***որոշում եմ.***

Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց 20/2 հասցեում գտնվող 0.06հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. ապրիլի 18
ք.Վանաձոր